

ՄԱՆԶԷՍԹԱՆԻ

ՀԱՅ ԳԱՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍԲԻ

(Շ-բ-ն-ի-ն-ի-ն-ի-ն)

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Նախորդ յօդուածին մէջ Մանչէսթըրի Հայոց միւնչէն ո՞ր աստիճան նորաձեւութեան և օտարասիրութեան հետամուտ միւնչէն անգամ իրենց այդ մոլութիւնը մեր ազգային եկեղեցական արարողութեանց ու ծէսերուն մէջ ալ մտցնել ուղիւ չափ օտարամուլ ըլլալուն վայրէք քանի որ խօսեցանք, այս առթիւ հարկ կը համարուիք եկեղեցասիրութեան մասին ևս յիշալ Հայ գաղթականութեան միւնչէն ո՞ր աստիճան բարեպաշտական զգացում մը կրելուն նկատմամբ ալ քանի մը խօսք ընել:

Ինչպէս ըսինք ի սկզբան, Մանչէսթըրի հայերը ձեռք ձեռքի տալով, ունեցած փոքր մատուռներն փառաւոր եկեղեցոյ մը փոխակերպելու հաճելի գործը կատարած և ի զուգն հանած էին և արդարեւ ասոնց՝ ազգային մատրան հիմնարկութեան և եկեղեցոյ շինութեան համար, տաքած զանքերնին, թէ՛ դրամով և թէ՛ ուրիշ կերպով, բրած մեծամեծ զոհողութիւննին մեծ զոհութեան արժանի է այս մասին մեր նախնաց եկեղեցաշինութեան բարի օրինակին հետեւած ըլլալով^(*) քորք գոյաւանս մասը:

Բայց քանի որ եկեղեցի մը կանգնելուն միակ և բուն նպատակը թէ՛ շէնք սխալիք, զոնէ շաքաթը տեղում մը՝ հոն երթալ և քրիստոնէական պարտաւորութիւնքը կատարելն է մեր Մանչէսթըրի Հայոց իրենց այս միակ պարտականութեան մասին:

Թիւնը ճշիւ կատարելու մասին ցոյց տուած զանցառութիւնն ու անհոգութիւնը տեսնելով մարդ բնականաբար կատկուի հետեցնել թէ՛ Մանչէսթըրի Հայերը ազգային այդ եկեղեցին ոչ թէ իրենց բարեպաշտութեանը համար, այլ ի ցոյցս օտարին՝ իրենց մեծագործութեան մէկ կոթողը կամ յիշատակարանն ըլլալու նպատակաւ կանգնած ըլլալու են:

Հայոց օտարասիրութեան միշտ գէշ կողմը սակեցած է թէ որ օտար երկիր մ'որ գաղթէ, կամ օտար ազգի մը հետ յարաբերութիւն ունենայ, միշտ և անմիջապէս այդ օտարին պակասութեանը կը հետեւի և անոր փոխն ու մոլութիւնը միայն իրեն կը սեպհականէ երբեք անոր ունեցած առաքինութիւնը իրեն օրինակ չառնելով: Օրինակի ազագուս Արգիլաքիք ինչ մոլութիւններ ալ ունենան, զոնէ բարեպաշտութեան մասին սակեցելի յատկութիւնն ունին, որ իրենց կրօնական պարտաւորութիւնը ճշգիւ և անթերի կատարելէ մաղիւ չափ չին շեղիր ու չեն կենար հոտ: Մէք Հայերս ալ զոնէ այս մասին Անգլիացոց բարի օրինակին հետեւելու եթէ ըլլայինք, կիրակի օրերը անպատճառ երկու անգամ պարտաւոր ըլլալու եմք եկեղեցի երթալու, միւնչելու Մանչէսթըրի այնքան Հայ ժողովուրդեան մէջէն, որոց թիւն արդէն ծանուցած ըլլալով՝ այժմ կրկնել աւելորդ կը համարինք, այսքան ժողովուրդէն, — կամաքմք ըսելու, — հազիւ հազ 15 - 20 կամ առաւել 25 հոգի կիրակի օրերը եկեղեցի կը յաճախեն, որոց մէկ մասն ալ պատարալին աւարտմանը կը հասնին գրիթէ և զիտելու կէտ մ'ալ սակ թէ ամեն անգամ եկեղեցի յաճախող Հայերը միշտ միւնչոյն անձերն են, բացակայներն միշտ բացակայ մնալ ուղիւ, հազիւ թէ ասոնց մէկ մասը միայն տաղաւարի օրերը կամ շատ քիչ անգամ կուգան, կան ոմանք ալ՝ որք հազիւ տարին մէկ կամ երկու անգամ եկեղեցին կը տեսնուին:

Հոգեւոր առաջնորդներն ի նախիր կը յորդորեն և կը խրատեն զժողովուրդը՝ որ եկեղեցի գալով իրենց կրօնական պարտաւորութիւնքը կատարելու փոյթ ունենան. զուր տեղը ժամասացութիւնքն ու պատարազը կը յապաղեն և կերկարա-

(*) Մանչէսթըրի եկեղեցոյ շինութեան և կառուցման հոգաբարձութիւնը, նոյն տեղի ժողովուրդեան կողմանէ քուէարկութեամբ Մանչէսթըրի քաղաքապետին, կաթողիկոսին, և Պօղոս Ստեփանեան Պարոնայց յանձնուած էր, որոնք Սկեղեցոյ և տոր կից Առաջնորդարանին շինութեանց մընչեաւարտմանը փնչպէք հարկ և պատշաճ էր աշխատութիւն և լաւք ըր խնայեցին:

ձգին մինչև կես օրը — որպէս զի, զանգամ ընե-
լու տեղի մը չը մնայ թէ Ժամաստցութիւնը կա-
նուխ կսկսի կամ կանուխ կաւարտի. — բայց ա-
ստնց բոլորն ալ սկստապ տեղը կը լլայ որովհե-
տե եկեղեցի չը կացողներուն բոլորն ալ իւրա-
քանիւրն դատ դատ իր պատճառն ու նպատակն
ունի. Աստնց մէկ մասին ծուլութեամբ ըլլալն
յայտնի է ոմանք Ժամաստցութեան և պատու-
րազի ասան զբասանքի համար շրջագայելու կե-
նին և երբեմն նոյն իսկ մեր եկեղեցիին առջևէն
ալ կանցնին որպէս թէ ցուցնելու համար թէ
իրենք հաւատոյ մասին անտարբեր և ազգամար-
կն և աստի կողմն փիլիսոփայ ձեանալ. Այս
նորերու և Վօլթերներուն ընթացքին զմայրող և
աստնց հեռեւորներ ալ պակաս չեն փոքր մաս մի
ալ գիւղեր և քաղաքին մօտի արուարձանները
կը բնակին որոնք մեր եկեղեցիէն հեռի լինելով
որպէս թէ իրենց այս հեռաւորութեանը պատ-
ճառաւ՝ անդրիական եկեղեցիները յաճախելին
ներկի ըլլալ կը համարին. մինչդեռ բուն նպա-
տակին՝ ինքզինքնին և իրենց ջերմեանայութիւ-
նը անդրիացի հարուստ օրիորդաց ալ ցոյց տա-
լով, անոնց հետ կարենալ ամուսնանալու զի-
րութիւն մը յառաջ բերել է:

Խօսքերնիս Եւրոպայի Հայ գաղթականութեան
կրօնական բարեկալութեան ընթացքին վրայ
ըլլալով, չենք կրնար այս մասին Բաբելոն հայ
գաղթականութիւնն ալ չը յիշիլ. Թէպէտ՝ ինչ-
պէս վերն ըսնիք՝ Մանչեսթրի հայ հասարակու-
թիւնն այս մասին քաղաքանիւրէ և բայց իմէ Բա-
բելոն հայ Ժողովրդին հետ բազմապիսի ըլլանք,
շատ և շատ գովելի պիտի գտնենք. որովհետեւ
Բաբելոն հայ հասարակութիւնը կրկնապատիկ աւե-
լի է թուով քան Մանչեսթրի հայերն և որոնք
եկրմտի տէր և հարուստ ընտանիքներէ ուսա-
նող և ճանապարհորդ ելն. անձանցմէ կը բաղկա-
նան, այսու ամենայնիւ իմէ Բաբելոն մեր ազգա-
յին մատուռն երթաւ կիրակի օր մը ինչպէս այն
կողմէն քանի մ'անգամ անցուարձիս՝ անձամբ
ականատես եղած եմ, շատ քիչ թուով Ժողո-
վորդ կը տեսնուի և երբեմն ալ բնաւ մարդ չը
գտնուիր:

Բաց յայտնէ, Մանչեսթրի Հայր շատ ա-
ւելի ազգասէր և կրօնասէր պէտք է զանիլ. Բա-
բելոն հայերէն, ինչու որ Մանչեսթրի եկեղեցւոյ
հիմնադիրներն և անոր տարեկան ծախքն հոգա-
ցողներն միայն վաճառական մարդիկ լինելով,
այդ մասին ոչ ջանք խնայած են և ոչ զրամ-
կանքանք են հոյակապ եկեղեցի մը և ցարդ կը
պահին զանի. և միթէ Բաբելոն հայերն, որք
Մանչեսթրի հայերէն շատ աւելի հարուստ են
և բազմաթիւ, չէին կարող եկեղեցի մը կառու-
ցանելու, և այս բանին իրենց այս մասին ունե-
ցած անտարբերութենէն և անհոգութենէն զատ
ուրիշ ի նչ պատճառ կրնայ տրուիլ՝ ինչպէս ի-
րենց ալ շարունակ եկեղեցի չերթալու սովորու-
թիւննին մեծ ապացոյց մ'է մեր այս ըսածին:

Այս մասին քիչ մ'ալ յառաջ երթալով, Տաճ-
կաստանի հայերն^{*)} ալ բաւական զուրա չը թու-
ղուք. և մեր կարծիքը՝ իմէ Մանչեսթրի և
Բաբելոն հայերը պատարակելի են այդ մասին
Տաճկաստանի հայերն ինչու ազատ ըլլալու են
սողկէ քանի որ ներկայ գարուն կէսէն ի վեր է
որ Տաճկաստանի մանաւանդ Վ. Պօլսոյ հարուստ
հայերը օր ըստ օրէ եկեղեցի երթալէ զազրած են՝
այնպէս որ այս կրօնական զգացման և բարեպա-
տութեան թուլութիւնը բոլոր մեր ազգին վրայ
ընդհանրանալու սկսած ակտ մ'ըլլալու երևոյթն
ունի:

Իմէ կը կարծենք թէ՝ այս է կրթութեան և
յառաջադիմութեան ճանքան, չարաչար կը սխա-
լինք ինչու որ աչքերնուս առաջն ամեն օր մենէ
շատ լուծաւորեալ և քաղաքակիրթ ազգաց Ժո-
ղովրդներ կը տեսնենք՝ որք իրենց կրօնին և ե-
կեղեցւոյն ունեցած հնազանդութիւննին կաւել-
ցնեն և պարտաւորութիւննին անթերի կը կա-
տարեն. այնպէս որ Լոնտրայի և Պեղլինի նման
հարուստ մայրաքաղաքներու մէջ կիրակի օր մը
բոլոր եկեղեցիներն ալ կուտն բազմութեամբ լի-
ցուած են, և եկեղեցի գնացողաց ամենամեծ մասն
ալ աւելի հարուստներն են քան թէ աղքատ-
ներն. մինչդեռ մեր մէջն տարր հակառակը կը

(*) Հայա Տփլիսաց Լոսաւարեալները Թողմաք են
չը ինչմը:

տեսնուի հարուստը եկեղեցիէն հեռի և ազգութեամբ միայն եկեղեցի յաճախելու վրայ ըլլալով և արդեօք այս ընթացքով հասնելու է այն վիճակին, որ մեր ազգասէր եկեղեցականներն ալ պարտաւորին աղօթելու՝ որ հայերը չը հարստանան տեսնելով որ հարստութիւնը անոնց սրտէն հեռացնելու և պաղեցնելու վրայ է կոծնաւորութիւնն ու բարեպաշտութիւնը:

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Շատ ծանր և փափուկ է այս մասին վրայ խորհրդածութիւն ընելը և ասկէ առաջ գրուած յօդուածներէն ամենէն դժուարը:

Նպատակնիս մեր ազգը շարունակ գովաբանելով ինքնզինքնիս խարել չէ, նաեւ յանկրաւ զարտաւելով քաջաբերութիւննիս կորիւլ և յուսահատութեամբ ալ պատճառ ըլլալը խելք չէ այլ ինչ է՝ էութիւնը՝ պէտք է զայն գրել այս մասին ինչպէս ասկէ առաջ գրուած յօդուածներուն մէջ ըսածնիս ոչ անձնական՝ այս ինքն այս կամ այն անհատի համար է և ոչ ընդհանուր՝ այլ այն մեծագոյն մասին կը վերաբերէր՝ որոնցմէ ոմանք այս ինչ պակասութեամբ ենթակալ են, միւսն ալ այն ինչ անտիք կամ թերութեամբ ուրիշ մասին եթէ Անդղիացւոց օրինակին հետեւելու ըլլալք ինքզինքնիս ուղղելով ու բարեղբելով արդարեւ մեր ազգը մեծ յառաջադիմութիւն ըրած կը համարուի:

Ասիական ազգերուն մէջ Հայոց ազգի վաճառականութեան մասին ունեցած տաղանդը հոշա՛վաճառականութիւնը մինչեւ Հոլանտայի և Իտալիոյ վաճառաշահ քաղաքները զարմանալի կերպով տարածեր են, որոյ մասին ուրիշ ատեն մանրամասնաբար խօսել կը խոստանամք: Հայոց վաճառականութեան մէջ տաղանդաւոր ըլլալը անուրանալի է ասկից զատ Հայը վաճառականութեան մէջ հաւատարիմ է և պարկեշտ ինքն յօղ, աշխատասէր և պանդխտութեան ատեն զրկողութեամբ անտիք վարձուած, որոնց ամենն ալ վաճառականութիւնը կը յառաջացնեն և կը բարգաւաճեն:

Արեւմտեան գաղտնի պատճառ կայ՝ որ արգելք կըլլայ մեր յառաջադիմութեան այս ճիւղին մէջ:

Եթէ քանի մ'ամիս Մանչեսթրի մէջ ազգային մը քննարկութեամբ կը տեսնայ և կը համոզուի որ ասոր միակ և զիսաւոր պատճառը չար նախանձն է: Բնական է որ տեղացին այս ինքն Անդղիացին Հայ վաճառականին մը վրայ տեղեկութիւն խնդրելու հարկաւորի որն որ իւր ազգականներուն հարցախորձ պիտի ընէ և ծանօթանայ փոստ այն խելք հայուն գլխուն որուն վիճակին համար իր ազգակիցներէն տեղեկութիւն կուգուի որոնցմէ ոմանք Կիւրտն կը կրտրին, ոմանք լուութեամբ և զանազան շարժումներով կուգն խելքին տունը քանիցէ՝ կանաւանէ հայրենապէրներ որ կը մտածեն թէ իրենք առաջին կարգի տեղը բռնած են՝ ինչո՞ւ այս ինչ մարդն ալ իրենց վիճակին մերձենայ, միւսներն ալ նիւթականին վրայ մտածելով՝ կըսեն թէ նոր եկող կամ ասանկները եթէ քաջաբերութիւն գտնեն, օրէ օր կը շատնան և իրենց վաւստակը կը պակսի: Հայն զՀայը պարտաւոր այնքան ընդհանուր եղած է որ՝ Անդղիացիք անգամ քիտեն և կը խրատեն՝ որ այս պակասութիւնէն ետ Կենան բայց ի զո՞ր: Մանչեսթրի մէջ Հայէն ի զատ շատ ազգեր կան, որք ընդհանրապէս զիրար կը պաշտպանեն և կը գովեն՝ կը պատահի որ մէջերին սնանկութիւն կը պատահի, այն ժամանակ կը պաշտպանեն զսնանկացողը հաստատելով թէ անմեղ է և խելք՝ իսկ եթէ Հայոց վաճառականաց մէջն անտեղութիւն կը պատահի, իր ազգակիցները կը տաքածայնեն անդին ասդին ու ռախակից լինելով անոր պակասութիւնները կը հրատարակեն և անոր դէմ իբրեւ ակոյտան կը պատերազմին, իբր թէ իրենք միայն այն մասին անարատ քննենք:

(Մանչեսթրի յիշատակագրէն):

Օրագիր:

(*) Յօդուածագրին ներկայ ակնարկութիւնը եւս անհիմն է, իսկ ատեւութիւնը շատ թերեւ եւ կցկտուր:

Ծ. Իմր. Արարատայ.